

# ՉՈՉԱՆՑ ՏՈՒՆ՝

## Մ Ե Ծ Դ Ա Ի Ի Թ 2

1. Մսըրայ Մեւրք լոր մեռաւ, կնիկ թուղթ յետողկեց Դաւթըն. «Ա՛րի, քծիս՝ ա՛ռ. էն ինչ Սասուն քիւ ձեռն ի. Մսըն էլ թը մնայ քիւ ձեռ»:

2. Դաւթ յիւր բարեկամքիւր, տէրտէր կանչից. իբիւր, յիւր ժողով իրից՝, էսաց.—Մսըրայ Մեւրքի կնիկ ճամբսիւր ի իմ յիտիւ; իս տ'երթամ:

3. Ըսըն.—Դաւթ, լոր կերթաս, մենք չընք տար մ'երթայ, քիւ Բեճն ի. կերթաս, գնա՛, մենք չընք ուզի. թուղ զՄսըր, յիւրիչ թաքեաւուրի տեղ էլ հալա կուզինք զաւթիս: Էզա Մսըր որ կուտայ քի առանց կուիւ, առանց բան, գիւ վրէ՛ չըս էրթայ, շատիւր կուուլ կառնին, էզա հազր տեղ ի, շիւտ գնա՛:

4. Կնիկ էսաց.—Դիւ կերթաս, Դաւթ:

Էսաց.—Խա՛, կերթամ:

Էսաց.—Էն թուրք ի, գիւ խայ, լըէ՛ կերթաս:

Էսաց.—Ընծի կանչիւր ի, տ'երթամ:

Էսաց.—Վուր գիւ կերթաս, քեառսուն տարը գիւ իմ վերայ խարամ ու սլաս ըլնու, գիւ իմ կեողլընք քեառսուն տարը տը չգեաս. իս խայ իմ, էն տաճիկ ի, գիւ զէն կուզիս, քծի կը թուզինիս:

Էսաց.—Մեռնը էն մարթ, լոր դօտիկ տայ, կիւտիկն՝ չառնը:

5. Անգիւց Դաւթ կըլնը, կերթայ Մսըր. լուր կերթայ Մսըր, կառնը Մեւրքի կնիկեան, էրկու, իրեք տարը կը մնայ կնիկեան կուշտ:

4. Վէպս գրի առնող Սարգիս Հայկունին չունէր ընդհանուր վերնագիր. իսկ այս իմ ընտրածը, որ չունի ցարդ հրատարակուած ոչ մի փոփոխակ, կը բացատրիմ յառաջարանում: Ստեփան Կանայեանց:

2. Ասած է Մոկաց Հաղին ղիւղացի Թումաս Պետրոսեան: Աս լսած է 53 տարի առաջ Յօխան Եղիանեանցէն, որ նոյն ժամանակ զառամեակ ձերունի էր: Պատմող Թումաս 60-70ամեայ է, իւր ասածը ստույգ կը համարէ. իսկ ուրիշ ձիւղերն նոր յերիւրուած աւելորդարանութիւն: Ս. Հայկունի:

5. Նախապէս գրուած՝ էրաց. 4. Ինչո՞ւ: 5. Դիւին զնկու բարակ, փայտէ շրջանակ: